# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Ք. Երևան ___ ____ 2022թ.

Դիակոնիա Բարեգործական հիմնադրամը՝ ի դեմս փնօրեն Բարույր Զամբազյանի /այսուհետ՝ **Հիմնադրամ**/, մի կողմից

ԵՎ

ՀՀ Լոռու մարզպետարանը՝ ի դեմս մարզպետ Արամ Խաչատրյանի/ այսուհետ՝ **Մարզպետարան**/, մյուս կողմից

Կարևորելով Հայաստանի Հանրապետության մարզերի բնակչության առավել խոցելի խմբերին սոցիալական մարդասիրական, կրթական ու առողջապահական աջակցության տրամադրումը ,

Արժևորելով Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների ու բնակչության զարգացմանն ու բարեկեցությանը միտված աշխատանքների կարևորությունը ,

Գիտակցելով Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում հասանելի և հասցեական սոցիալական ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը,

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը /այսուհետ՝ Հուշագիր/ հետևյալի մասին.

## 1. Հուշագրի նպատակը

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Կողմերի կանոնադրությունների շրջանակներում համագործակցել իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ, իրականացնել համատեղ ծրագրեր:

## 2. Համագործակցության ուղղությունները

**2.1. Մարզպետարանը պատրաստակամ է՝**

- աջակցել բարեգործական Ծրագրերի արդյունավետ իրականացմանը՝ տրամադրելով անհրաժեշտ իիֆորմացիա մարզում բնակվող սոցիալապես անապահով կարիքավոր ընտանիքների, անձանց վերաբերյալ:

**2.2. Հիմնադրամը պատրաստակամ է՝**

հնարավորության սահմաններում իրականացնել սոցիալական փարափեսակ բարեգործական ծրագրեր՝ նպաստելով մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը և տնտեսական կայունացմանը՝

- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների, հաշմանդամ երեխաների ամենամսյա սննդի հափկացում,
- սոցիալապես անապահով ընտանիքների բուժօգնություն սփանալու միջամտություն,
- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների, հաշմանդամ երեխաների ուսման վարձերի և դասընթացների վճարների տրամադրում,
- բարեգործական ճաշարանի կազմակերպում սոցիալապես անապահով ծերերի տաք սննդի ապահովում,
- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում,
- սոցիալապես անապահով ընտանիքիների երեխաների և նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական և լոգոպեդի ծառայության ապահովում,
- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ուսումնադասփիարակչական, ձեռքի աշխատանքների, արհեստագործական խմբակների կազմակերպում,
- սոցիալապես անապահով ընտանիքիների բնակարանային պայմանների բարելավման նպատակով շինարարական ապրանքների և նյութերի հափկացում,

- սոցիալապես անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավման նպատակով գյուղատնտեսական տեխնիկայի, սերմերի, ընտանի կենդանիների, պարարտանյութերի, անասնակերի հատկացում:

### 3. Համագործակցության հիմնական սկզբունքները

Կողմերը համաձայն են.

- անմիջապես արձագանքել սույն հուշագրի Կողմի աջակցության խնդրանքին՝ բաց, խելամիտ և համագործակցության ոգով, հատկապես հրատապ դեպքերում,
- գտնել ճկուն և փոխադարձ ընդունելի լուծումներ այն իրավիճակների համար, որոնք դուրս են Կողմերից յուրաքանչյուրի վերահսկողությունից և որոնք կարող են ազդել ծրագրի իրականացման վրա (օրինակ, սոցիալական, քաղաքական միջադեպ, բնական աղետ և այլն)
- պարբերաբար վերանայել իրենց համագործակցությունը և շարունակաբար ուղիներ գտնել այն ամրապնդելու և հզորացնելու համար:

### 4. Հուշագրի գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծման հիմքերը

- Սույն հուշագիրը կսկսի գործել Կողմերի ստորագրման պահից՝ անժամկետ:
- Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սույն Հուշագրի բոլոր փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե դրանք կատարված են գրավոր ձևով, ստորագրված և կնքված են:
- Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի պահանջով՝ այդ մասին նախապես մյուս Կողմին 10 /տասը/ օր առաջ տեղեկացնելու պայմանով::
- Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

### 5.Եզրափակիչ դրույթներ

- Հուշագրի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:
- Սույն հուշագիրը կազմված է երկու բնօրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին, հայերեն և անգլերեն լեզուներով: Երկու տեքստերն էլ հավասարազոր են, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ հակասություն կարող է ծագել երկու տեքստերի միջև՝ գերապատվությունը կտրվի հայերեն տեքստին:

«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հասցե՝ ՀՀ, Ք. Երևան, Դավթաշեն, Հույսի Ավան թաղ.
ՀՎՀՀ 00068196
Հիմնադրամի փնօրեն Բարույեր Ջամբազյան

________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, 2001, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ________________
ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյան

________________